ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

5 ապրիլի 2016 թվականի **թիվ 29** քաղ. Մոսկվա

Սաղարթավոր տեսակների փայտանյութի՝ կիսասպիտակեցրած կամ սպիտակեցրած թաղանթանյութի առանձին տեսակների համար Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի ներմուծման մաքսատուրքի դրույքաչափ սահմանելու մասին

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 42-րդ և 45-րդ հոդվածներին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց.**

1. Սահմանել Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի ներմուծման մաքսատուրքի դրույքաչափ (Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հուլիսի 16-ի թիվ 54 որոշման հավելված) ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 4703 29 000 1 ծածկագրով դասակարգվող սաղարթավոր տեսակների փայտանյութի՝ կիսասպիտակեցրած կամ սպիտակեցրած թաղանթանյութի առանձին տեսակների համար՝ մաքսային արժեքի 0 տոկոսի չափով՝ սույն Որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2019 թվականի մայիսի 31-ը ներառյալ:

2. Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի մեջ (Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հուլիսի 16-ի թիվ 54 որոշման հավելված) կատարել հետևյալ փոփոխությունները՝

ա) չորրորդ վանդակում ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 4703 29 000 1 ծածկագրով դիրքը լրացնել «4Գ)» ծանոթագրությանը կատարվող հղումով.

բ) Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի 14Գ ծանոթագրության մեջ «2014 թվականի հունվարի 1-ից մինչեւ 2015 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ» բառերը փոխարինել «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2016 թվականի ապրիլի 5-ի թիվ 29 որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից մինչեւ 2019 թվականի մայիսի 31-ը ներառյալ» բառերով:

3. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից՝ 30 օրացուցային օրը լրանալուց հետո՝ բացառությամբ 2–րդ կետի «ա» ենթակետի:

Սույն Որոշման 2-րդ կետի «ա» ենթակետն ուժի մեջ է մտնում 2016 թվականի սեպտեմբերի 1-ից:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի
կոլեգիայի նախագահ՝ Տ. Սարգսյան